# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2019թ. սեպտեմբերի 8-ից 11-ը Նյու Դելի (ՀնդկաստանիՀանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ**

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Նյու Դելի (Հնդկաստանի Հանրապետություն)

   2019թ. սեպտեմբերի 8-ից 11-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի քարտուղարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի Կողմերի բարձրաստիճան հատվածի 14-րդ հանդիպմանը:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Բարձրաստիճան հատվածի հանդիպման շրջանակներում տեղի են ունեցել նախարարական կլոր սեղանի քննարկումներ և ինտերակտիվ երկխոսություններ հետևյալ հարցերի շուրջ.

- հողեր, կլիմայի փոփոխության և վերականգնվող էներգիա,
- գյուղական և քաղաքային համայնքներ. Ձախողում կամ ծաղկում միասին,
- հկոհամակարգերի վերականգնման գլոբալ շարժի խթանում.
- հողային տնտեսություն՝ հիմնված լավագույն փորձի վրա,
- առողջ երկիր. Առողջ մարդիկ:

Հանդիպումը կենտրոնացել է անապատացման, հողերի դեգրադացիայի և երաշտի վերաբերյալ կարևորագույն հարցերին և քննարկվել են վերջիններիս վերաբերյալ լուծումները:

Հանդիպման շրջանակներում՝ «առողջ երկիր. Առողջ մարդիկ» խորագրով երկխոսությանը հաջորդեց պաշտոնական հայտարարությունների նստաշրջանը, որի ընթացքում ելույթ եմ ունեցել տարածաշրջանի 19 երկրների անունից:

Երկրները կարող են դիմակայել շրջակա միջավայրի ապագա մարտահրավերներին՝ օպտիմալացնելով հողերի կառավարումը, ընդլայնելով կայուն փորձը, որն ուղղված կլինի դեգրադացված հողերի վերականգնմանը:

## 7. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վերոնշյալ հանդիպաման ընթացքում երկկողմ հանդիպումներ եմ ունեցել Մոլդովայի Հանրապետության գյուղատնտեսության, տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարար Լիվիու Վոլկոնովիչի հետ, որի ընթացքում քննարկել ենք անտառային տնտեսությանն առնչվող հարցեր: Քննարկման ընթացքում քննարկեցինք հետագա համագործակցության հեռանկարները՝ մասնավորապես Հայաստանի փորձը՝ անտառների կառավարման ոլորտում:

Երկկողմ հանդիպում եմ ունեցել նաև Չինաստանի անտառային տնտեսության և մարգագետինների ազգային կառավարման վարչության ղեկավար պարոն Զանգ Յանլոնգի հետ: Հանդիպման ընթացքում քննարվել են Հայաստանում հողերի դեգրադացման չեզոքության դրամաշնորհային ծրագրին առնչվող հարցեր, որոնք ուղղված էին դեգրադացված հողերի վերականգնմանը:

Միջոցառման շրջանակներում երկկողմ հանդիպումներ եմ ունեցել նաև Հնդկաստանի Հանրապետության շրջակա միջավայրի, անտառների և կլիմայի փոփոխության նախարար Պրակաշ Ջավադեկարի հետ, որի շրջանակներում ներկայացվել և քննարկվել են կլիմայի փոփոխությանը, կլիմայի ոլորտում իրականացվող և սպասվող գործողություններն ուղղված կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցեր:

Երկկողմ հանդիպումներ եմ ունեցել ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ղեկավարների, ինչպես նաև Կանաչ կլիմայի հիմնադրամի գործադիր տնօրենի, Գլոբալ բնապահպանական ծրագրի ղեկավարի և կենսաբազմազանության և էկոծառայությունների գիտաքաղաքական միջկառավարական հարթակի գլխավոր քարտուղարի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են շրջակա միջավայրի պահպանությանն ոլորտի ընթացիկ և հեռանկարային ծրագրեր:

## 8. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կողմերի հանդիպումը կենտրոնացած էր հողերի կառավարման և պլանավորման կարևորագույն բացերի, ինչպես նաև իրականացված գործողությունների վրա:

Կոնվենցիայի Կողմերը համաձայնության եկան այն գործողությունների շուրջ, որոնք յուրաքանչյուրն իրականացնելու է առաջիկա երկու տարիների ընթացքում:

Հանդիպման շրջանակներում ընդունեց «Դելիի հռչակագիրը», որում կողմերը պարտավորություն ստանձնեցին մի շարք հարցերի շուրջ, ներառյալ գենդեր և առողջություն, էկոհամակարգերի վերականգնում, կլիմայի փոփոխության վերաբերյալ գործողությունների ձեռնարկում, մասնավոր հատվածի ներգրավում, ինչպես նաև «Անտառների Խաղաղություն»

նախաձեռնությունը և Հնդկաստանում հինգ միլիոն հեկտար դեգրադացված հողի վերականգնման ուղղությամբ գործողությունների իրականացումը:

ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի Կողմերի բարձրաստիճան հատվածի 14-րդ հանդիպման շրջանակներում համաձայնություն ձեռք բերվեց 36 որոշումների վերաբերյալ՝ մասնավորապես ամրապնդել և զարգացնել հետագա գործողությունները՝ հիմք ընդունելով 2018-2030 թվականների կոնվենցիայի նպատակները: Հանդիպման ավարտին ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի գործադիր քարտուղարը խոսեց հետևյալ հարցերի շուրջ.

- Հողի վերականգնումը, որպես կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության համար մակերեսային լուծում,
- Երաշտի դեմ պայքարն ու արձագանքը, որպես խիստ կարևոր գործոններ կլիմայի փոփոխության ֆոնին,
- Առաջնահերթություն պետք է տրվի գենդերային հավասարության ապահովմանը, երիտասարդության ներգրավվածությանը, հողային իրավունքների պահպանմանը:

Շրջակա միջավայրի նախարար

Էրիկ Գրիգորյան